
ՉԱԳԱՎԱՆՔԻ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Չագավանք կամ Գետարգելի Սբ. Նշան վանքը գտնվում է պատմական Կոտայք գավառի Չագ՝ գյուղի հարավարևելյան բլրալանջին, ներկայիս Կոտայքի մարզի Առինջ գյուղից 2 կմ հյուսիս-արևելք: Վաղ միջնադարից հայտնի այս նշանավոր վանական համալիրը և նրա վիմական արձանագրությունները, ինչպես XIX դարավերջին, այնպես էլ հետագայում որոշ չափով ենթարկվել են մասնագիտական հետազոտության: Բնակավայրի տեղադրության վերաբերյալ Ղևոնդ Ալիշանը նշում է. «...մերձ ի Մէհուպ ի հարաւոյ կուսէ և յարևելից Պտղոսից – մղոնաւ կամ դոյզն ևս հեռի, առ եզերք Գրրգուլագայ յահեկէն, կայ միւս անուանի գիւղ առ Հինս՝ Չագ»²: Նա գյուղը հաճախ հիշատակում է «Չագավանաց գիւղ» անվամբ: Վանքը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս հայտնի ուխտատեղի է: Գյուղը մեծ ճանաչում է ստացել շնորհիվ Սբ. Նշան մենաստանի: Վանքը վիմագրերում հիշվում է նաև Գետադարձ կամ Գետարգելի Սբ. Նշան, շնորհիվ այստեղ պահվող հռչակավոր Գետարգելի խաչի. «անդ հանգուցանելոց զգերահռչակ Գետարգել խաչն, որպէս յիշի ի պատմութեան նշանին»³: «Չագավանքի սուրբ Նշան» անվանումը վերաբերում է ամբողջ համալիրին, ուր որպէս սուրբ մասունք պահվել է «Տիրոջ խաչափայտի» մի մասնիկը: «Գետարգել-Գետադարձ» անվանումն, անշուշտ, խարսխված է Պետրոս Ա Գետադարձ (1019–1054) հայոց կաթողիկոսի անվան հետ: 1021–1022 թթ. Տրապիզոնում հայ-բյուզանդական բանակցությունների ժամանակ Պետրոս կաթողիկոսը Վասիլ Բ կայսեր հետ կնքում է մի պայմանագիր, որի համաձայն Հովհաննես-Սմբատ Բագրատունի թագավորի մահից հետո Անին անցնելու էր Բյուզանդական կայսրությանը: Այդ անցքերին քաջատեղյակ Արիստակես Լաստիվերտցին սրտի ցավով գրում է, թե «անդ եղև Հայոց կորստեան գիր և նամակ»⁴: 1022 թ. հունվարի 6-ին Աստվածահայտնության տոնի օրը կաթողիկոսը կայսրի և նրա մետրոպոլիտների ներկայությամբ՝ ջրօրհնէքի արարողությունը կատարելիս, «ի ձեռն Սուրբ Նշանին» (Խաչի՝) գետ արգել սբ նշանն» զորությամբ՝ հրաշք է գործում՝ կանգնեցնում, արգելում, ետ է դարձնում «զջուրն յորդահոս գետոյն հզարի արգելեաց յաշխարհն Յունայ ի

¹ Հայրավանքի ՈԿ (1211) արձանագրության մեջ համանուն անունով հայտնի է ևս մի գյուղատեղի «Ձխածիլ Չագն» (Գիվան հայ վիմագրության, պր. IV, կազմ. Ս. Բարխուդարյանը, Երևան, 1973, էջ 69):

² Ղ. Ա լ ի 2 ա ն. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 291:

³ Նույն տեղում: Գետարգելի սուրբ խաչը իրենից ներկայացնում է «ոսկյա ակնակոտ զարդարված՝ գտնվում է Էջմիածնա թանգարանի մեջ, որ գործ է դրվում Մեռնօրհնության ժամանակ» (Կ. Կ ո ս ա ն յ ա ն ց. Հայոց վանքերը, Մոսկով, 1886, էջ 79):

⁴ Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցույ, աշխ. Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 31-32:

ձեռն Սուրբ Նշանին»⁵: Ինչպես Լաստիվերտցին է նկարագրել, «Ի հեղուլ հայրապետին գտերունական իւղն ի ջուրսն, ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն զոր տեսին առ հասարակ ամենեսեան, և փառաւորեցին զԱստուածս և բարձրացաւ եղջիր հաւատոյս մերոյ»⁶: Ժողովրդական այս պատումը, անշուշտ, մշակվել է հոգևոր մատենագիրների կողմից՝ փառաբանելով քրիստոնեական մեր հավատամքը, մեծարելով հայ եկեղեցու և նրա հովվապետի հեղինակությունը: Ավելի վաղ նմանատիպ դրվագ՝ նույն սյուժեով, առկա է Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ՝ հայ ժողովրդի մեծ դարձի վկայության կապակցությամբ⁷:

Սբ. Նշան մենաստանն անցյալում ունեցած իր դերով եղել է միջնադարյան Հայաստանի Այրարատ աշխարհի կրոնական, գիտակրթական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկը:

Պատմական աղբյուրներում Չագ գյուղի վերաբերյալ վաղագույն հիշատակությունը հանդիպում է Դավիթ Դվնեցու վկայաբանությունում: Դվնեցին ապրել է VII դարում, նա ազգությամբ եղել է պարսիկ՝ «տոհմէ յազգէ թագաւորաց» Սուրհան անունով: Անաստաս կաթողիկոսի (661–667) ձեռքով Արուճի տաճարում մկրտվել է քրիստոնյա: Կնքահայր իշխանապետ Գրիգոր Մամիկոնյանն իր հոր անունով նրան կոչում է Դավիթ՝ շնորհելով նաև որպես սեփական կալվածք Չագ գյուղը. «...կոչեաց զնա յանուն հօր իւրոյ Դաւիթ և ետ նմա զՉագ ի Կոտայսն»⁸: «Գիրք որ կոչի Յայսմաւորք»-ի հիշատակարանում Չագ գյուղի, և նրա նվիրատվության մասին ոչ մի խոսք չկա, իսկ մի այլ հիշատակարանի վկայությամբ՝ «Յայսմաւորք վկայութիւն սրբոյն Դաւթի Դրնեցոյն»՝ Անաստաս կաթողիկոսը, բազմաթիվ եպիսկոպոսների և քահանաների հետ խոշտանգված Դավթի մարմինը իջեցնում են խաչից և պատվով թաղում՝ «ի նշանաւոր տեղուոց, և տօն մեծ կարգեցին ամ յամէ», իսկ այնուհետև խաչը

⁵ Գետադարձ սբ. Խաչի մասին բանահյուսական հրաշապատում գրույցները սկզբնավորվել են տակավին միջնադարից և ավանդվել գրավոր տարբեր աղբյուրներով: Դրանցից մեկն առկա է Մատենադարանի №4505 ձեռագրում. «Գետարգել սբ. Նշանի» զորությամբ կաթողիկոս Ներսես Մեծը ավերում է Արշակավանը: Հոռոմոսի վանքի ձգնավոր Ատումը նույն այդ «Գետարգել սբ. Նշանի» օգնությամբ կարողանում է լեռը բաժանել երկու մասի, և Ախուրյան գետը փոխում է իր ուղղությունը, որի հետևանքով այլևս վնաս չի պատճառում վանքին ու վանականներին. «զգետ արգել սբ նշանն ընդդէմ լերինն և ասաց տր ամ զօրութեց աղաչեմ զքեզ արայ զօրութթ գետ արգել սբ նշանիս պատառեայ ի լերինս յայսմիկ և զնասցե ջուր գետոյս այս որ զնայ ընդ ի հիւսիսի դառնեայ անդէն թափ ընդ հարաւ: Եւ ուժգին որոտից «պատառեցաւ վէմն և լեռոն ընդ մէջ բաժանեցաւ յայս կոյս և յայս կոյս»: Հիշատակագիրը վերջանում է հետևյալ վկայությամբ. «իսկ այժմ խաւարածորն գեաւղ դարձաւ և կայ գետ արգել սբ նշանն ի ձագավանս յերկիրն կուտէուց» (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. №4505, թ. 70ա–70բ):

⁶ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ, էջ 31–32: Ա. Ղանալանյանը Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մասին ստեղծված վերոհիշյալ պատմական ավանդագրույցը մեկնաբանում է որպես «այլափոխված ձևով արձագանք ... կրոնական այն հալածանքների, որ կիրառվել են բյուզանդական կայսրերի կողմից հայերի նկատմամբ» (Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, էջ ԸԶ):

⁷ Տե՛ս Ա գ ա թ ա ն գ ե դ ու. Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 464:

⁸ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 63: Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 97:

տանում են «ի գիւղաքաղաքն ձագ և կանգնեցին յեկեղեցւոջն»⁹: Վաղ միջնադարում գյուղը՝ լինելով խոշոր բնակավայր, անվանվել է գյուղաքաղաք¹⁰:

Ձագ գյուղից էր հայոց կաթողիկոս Զաքարիա Ա Ձագեցին (855-877): Վերջինիս կենսագրության մասին, ցավոք, քիչ տեղեկություններ են պահպանվել: Առաջին վկայությունը Զաքարիա Ա Ձագեցու մասին հայտնում է X դարի մատենագիր Հովհաննես Դրասխանակերտցին (899-931): Պատմիչը, նկարագրելով Հայաստանի դժվարին իրավիճակը, գրում է, որ 855 թ. իշխանապետ Սմբատ Բագրատունի Խոստովանողը, քաղաքական խառնակ վիճակից ելնելով, Երազգավորք գյուղաքաղաքում, հրավիրում է եպիսկոպոսական ժողով և Զաքարիային շուտափույթ կարգում կաթողիկոս¹¹:

Միևիթար Այրիվանեցու վկայությամբ՝ XIII դարում Հաղբատում և Ձագավանում գումարվում են ժողովներ՝ եկեղեցու խարխլված հիմքերը վերականգնելու և աշխարհիկ կյանքում տեղ գտած անհարիր երևույթները վերացնելու համար: Այնպես որ թե՛ Հաղբատի և թե՛ Ձագավանից ժողովները Սսի 1246 թ. ժողովի շարունակությունն են: Թեև, ըստ մատենագրի, Ձագավանից ժողովը հրավիրվել է 1261-1281 թթ. միջև¹², սակայն հայ մշակույթի երախտավոր Գարեգին Հովսեփյանի հանգամանալից ուսումնասիրությամբ, այն կայացել է 1270 թ.¹³:

Ձագավանքը՝ իբրև մշակույթի ու գրչության օջախ, բուռն ծաղկում է ապրել մասնավորապես XIV դարի երկրորդ կեսից մինչև XVIII դարը: Այստեղ պատվիրվել, ընդօրինակվել ու նկարագարդվել են նաև բազմաթիվ ձեռագիր մատյաններ: 1317 թ. գրիչ սարկավագ Մոնոզոնը Ձագավանքում ընդօրինակել է «Մեկնութիւն Կաթողիկայ Թղթոց Սարգսի Շնորհալոյ» մատյանը, որի հիշատակարանում, ի թիվս այլոց, հիշված է նաև «գհայր Թաղեոս զԲոկիկ ճգնաւորն Ձագեցի»¹⁴:

1425 թ. Ձագավանքում Ստեփանոս գրիչը օրինակում է «Մեկնութիւն Տոմարիս Յակոբայ Դրիմեցոյ և ժողովածու այլ գրոց» ձեռագիր հիշատակարանը, ուր կարդում ենք. «Հայոց ՊՀԴ (1425) գրեցաւ յաստուածաբնակ սուրբ ուխտս, որ կոչի Ձագավանք, ընդ հովանեաւ սուրբ Գետարգելիս, և սուրբ Սարգսիս՝ Կուրանց կոչեցեալ, և սուրբ աջոյս Կիրակոսի և այլ սրբոցս, որք

⁹ Լիակատար վարք եւ վկայաբանութիւն Սրբոց Որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցոյ Հայաստանեայց, Վենետիկ, 1810, էջ 561: Գիրք որ կոչի Յայսմաւորք, ի թրւին Հայոց, ՌՃՀԹ, մարտի Բ. Գրիգոր Մարտրանեցոյ, էջ ՆՀԹ, մարտի ԼԱ, Յայսմաւոր վկայութիւն սրբոյն Դաւթի Դրնեցոյն, Կ. Պոլիս, 1834, էջ 143:

¹⁰ Յայսմաւոր վկայութիւն սրբոյն Դաւթի Դրնեցոյն, էջ 143:

¹¹ Հ ն վ ա ն ն ե ս Դ ր ա ս ի ա ն ա կ ե ր տ ց ի, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 130: Ստեփաննոս վրդ. Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 111: Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 291, Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. II, կազմ. Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 335:

¹² Միևիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, կազմ. Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 68:

¹³ Գ. վ ր դ. Հ ն վ ս ե փ յ ա ն. Ձագավանից ժողովը. - «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 22-47:

¹⁴ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1953, էջ 334:

կան հաւագեալ»¹⁵: 1427 թ. Ուրծա վանքում Չաքարիա գրիչն իր ընդօրինակած «Ժամագիրք և Պատարագամատոյց»-ում որպէս գլխատառերի ծաղկող հեղինակ է հիշատակում գրչության արվեստին քաջահմուտ Սարգիս վարդապետին, որն առաջնորդն էր Չագավանքի. «նան զՍարգիս Չագավանեցի, որ զգլխագիրն գրեաց»: Ժամագիրքը գրված է Սարգիս Չագավանեցու անմիջական ղեկավարությամբ. «առ ոտն վարժապետի մերո Սարգսի»¹⁶:

Չագավանքի վանական միաբանության պատմությունը XV դարի երկրորդ քառորդին՝ մասնավորապէս 1425–1428 թթ., սերտորեն առնչվում է ժամանակի մեծ մտածող, հոգևոր ու կրթական գործիչ Միմեոն Այրիվանեցու հետ: Միջնադարի նշանավոր բարունապետ Միմեոն Այրիվանեցին հայտնի էր որպէս մեծահամբավ ու բանիմաց ուսուցչապետ, ինչպէս նաև հմուտ գրիչ, ձեռագրերի պատվիրատու: Վարդապետը ձեռագիր հիշատակարաններում հիշվում է որպէս «գաստուածահաճոյ և զարդիւնական և մեծ վարժապետն Հայոց Միմեոն որ յայնմ ժամանակի փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն», «ամենագովելի և աստուածահաճոյ, սուրբ և քաջ հոռտորն և արհաջան բարունապետն, սիրելի գտեալ ամենայն սրբոց, և զմեծ վարդապետն մեր քաջ եկլեստիատէս Հայոց»¹⁷:

Հայոց ՊԶԷ (1428) թ. Չագավանքում իր մահկանացուն է կնքել Միմեոն Այրիվանեցին, որի հանգստարանի վրա այսօր կառուցված է կոպտատաշ քարերից մի անշուք մատուռ: Հողմահարված և քայքայված, քառակուսի հիմքով, երկթեք տապանաքարի հարավային կողին փորագրված է մեկ տող արձանագրություն: Վիմագրի տառերը փորագրված են բավականին մեծ, վայելչագիր և բազմաթիվ կցագրերով: [ԱՅ]Ս Է ՀԱՆԳԻՍ ԵՒ ՎԵՄ ԻՄԱՍՏՈՒՆ ՔԱՋ ՍԻՄԵՈՆ ԸՄԲՈՒՆԱՊԵՏԻՆ, ԹՎԻՆ Պ[ԶԷ] (1428)¹⁸ (նկ. 1):

Վանքի բակում, տապանաքարի մոտ կանգնեցված է եղել նաև Միմեոն բարունապետի գեղաբանդակ խաչքարը, ստորին մասում երկու տող արձանագրությամբ: Նրա վերնամասը կոտրված է, տեղահանված և դրված է Սբ. Նշան եկեղեցու շքամուտքի մոտ: Արձանագրությունը հանգավոր է և ունի բանաստեղծական բնույթ. ՍԲ. ՆՇԱՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ: ՏԻՊ ԵՒ ՊԱՏԿԵՐ ԱՆԵՂԱԿԱՆ ՍԻՄԵՈՆ ԸՄԲՈՒՆԱՊԵՏԻՆ ԼԵՐ ՔԱԻԱՐԱՆ: ԹՎԻՆ ՊԶԷ (1428)¹⁹:

Մենաստանում Ստեփանոս Վարագեցին օրինակել է «Քերականութիւն և բառգիրք» լեզվաբանական մի աշխատություն, որի առանձին ծավալուն պարբերությունների վրա բազում քրտնաջան աշխատանք է կատարել տեր Առաքել բարունապետը: Մատյանն անթվակիր է, միայն քերականության վերջում կարդում ենք՝ «յիշեցեք զՍարգիս վարդապետն՝ զառաջնորդ սուրբ ուխտիս»²⁰: Առաջնորդ Սարգիս վարդապետը միակ վանականն է Չագավանքում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 367–368:

¹⁷ Նույն տեղում, էջ 561:

¹⁸ Ռ. Գ ա ս պ ա ը յ ա ն. Միմեոն բարունապետ Տաթևացին և նրա գործունեությունը Չագավանքում. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «Լրաբեր»), 2005, № 3, էջ 174–183:

¹⁹ Մ. Մ ա դ ու մ յ ա ն. Միմեոն բարունապետ Տաթևացի. – «Լրաբեր», 1975, № 6, էջ 76:

²⁰ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 367–368:

Ինչպես վերը նշվեց, Սարգիսը 1427 թ. Ուրծա վանքում ծաղկազարդել է մի «Պատարագամատոյց», իսկ 1441 թ. մասնակցել էջմիածնի վեհաժողովին²¹:

1465 թ. Եղվարդի սուրբ Գրիգոր եկեղեցում գրիչ Սատթևոսի օրինակած Ավետարանում հիշվում է ոմն Մխիթար արեղա, որը եղել է սուրբ Գետարգելի առաջնորդ. «թուականիս Հայոց ՋԺԴ (1465) յիշեցէք ի զհոգևոր հայր մեր՝ զարի և քաջ զՍարգիս վարդապետն և զիւր միաբանքն՝ զՄխիթար արեղայն, որ է հայր վանացս սուրբ Գետարգելայ»²²:

1481 թ. Չագավանքում պատվիրատու Դոլյատ-Խաթունն իր ամուսին Հովհաննես արեղային պատվիրում է օրինակել մի Ավետարան, որը նվիրում է մենաստանին. «զԱւետարանս հալալ արդեանց իմոց և տվի Չագովանից, յիշատակ ինձ և ծնողաց իմոց ի լուսատու սուրբ Սարգսի և այլ բազմահաւաք սրբոց, որ աստ կան»: Հետաքրքրական է, որ հիշատակարանում վանքը նշված է մեկ Չագովանից և մեկ՝ Չագայ եկեղեցի ձևով. «Ես Դալյատս՝ հաւատարիմ կիմս, դարձեալ յետոյ տվի Աւետարանս զայս Չագայ եկեղեցուն»²³:

Ղ. Այիշանը նշում է, որ Թովմաս Վանանդեցին հիշատակում է Այրարատ նահանգում մի շարք ուխտատեղիներ, ի շարս որոնց, նաև Գետարգելը՝ այն անվանելով եպիսկոպոսանիստ: Այս իրողությունը փաստում է նաև Ոսկան վարդապետ Երևանցին, թե Չագավանը 1670 թ. «ի թեմս Հայոց» եպիսկոպոսական աթոռանիստ էր²⁴: Չագավանքի ծաղկուն շրջանը տևել է մինչև 1679 թ. մեծ երկրաշարժը: 1679 թ. «հունիս ամսուն աստուածասաստ բարկություն եղև ի վերայ երկրին Արարատեան»: Կործանվում են բազմաթիվ վանքեր՝ այդ թվում նաև Չագավանքը: Սբ. Կարապետ երկհարկանի եկեղեցու զմբեթը, հավանաբար, երկրորդ հարկը նույնպես խոնարհվել են այդ ժամանակ: «Այսոքիկ են աւերեալ եկեղեցիք Աղջոց վանք, Այրի վանք, Հաւուց թառ, Տրդատակերտն, Խորվիրայն Ջրվեժ, Չագավանք»²⁵, – գրում է պատմիչ Ջաքարիա Սարկավագր: Գմբեթի երկփեղկված կմախքն ընկած է եկեղեցու հարավային կողմում: Երկրաշարժից վանքն ամբողջովին չի կործանվում և լքվում, քանի որ XVIII դարում այն հիշվում է որպես գործող: 1708 թ. վանքի առաջնորդ է հիշվում Հովհաննես վարդապետը: 1733 թ. հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացին (1733–1737) այցելում է Չագավանք. «Գնացի ի Հաւուց թառ, որ է Ամենափրկիչի վանք: Անտի ի Աղջոց վանք և դարձայ ի սուրբ Գեղարդն, եկի ի Գառնի, ապա գնացի ի Երևան, անդեն գնացի ի Գետարգել»²⁶: Կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու (1763–1780) հավաստմամբ՝ 1736 թ. Չագավանքը դեռևս գործող եկեղեցի է եղել²⁷:

²¹ Նույն տեղում, էջ 368:

²² ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451–1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1958, էջ 232:

²³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1967, էջ 14:

²⁴ Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 291:

²⁵ Ջաքարեայ Սարկավագի Պատմագրություն, Վաղարշապատ, 1870, էջ 104:

²⁶ Աբրահամ կաթողիկոս Կրետացու Պատմագրություն Անցիցն իւրոց և Նաղիր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 6:

²⁷ Մ. Մ մ բ ա տ յ ա ն ց. Տեղագիր Գեղարքունի ծովագարդ զավառի, որ այժմ Նոր Բայազետ զավառ, Վաղարշապատ, 1895, էջ 249:

Թե երբ է հոգևոր կյանքը դադարել մենաստանում, պատմական ստույգ վկայություններ չեն պահպանվել: Մ. Սմբատյանցը գրում է, թե 1830-ական թվականներից Չագ գյուղում արքունական միջոցներով կառուցվել են եվրոպական ոճի, զարդարված ծառատունկ պարտեզներով բնակարաններ²⁸: Կառույցների համար որպես շինանյութ, ինչպես գրում է հեղինակը, ամբողջությամբ օգտագործել են Չագավանքի քարերը: Միգուցե այս է պատճառը, որ այսօր նույնիսկ չեն երևում Միմեոն բաբունապետի կառուցած պարսպի և մյուս շինությունների հետքերը: Ղ. Ալիշանը գրում է, որ զինվորական հրամանատարների տների հետ նաև կառուցել են քսան տուն հայ ընտանիքների համար²⁹: Ցարական կառավարությունը պետությանը մատուցած բազմամյա հավատարիմ ծառայության համար Ղահրաման աղա Աղամալյանին ընծայել է Չագ գյուղը՝ իր բոլոր «շինուածներով և հող ու ջրովը»³⁰:

Ինչպես հավաստում են ձեռագիր մատյանները, Չագավանքի մենաստանում պահվել են Սուրբ Սարգսի ու Սուրբ Կիրակոսի աջերը և բազում այլ սրբերի նվիրական մասունքներ: Ստեփանոս Վարազեցու օրինակած հիշատակարանը վկայում է, որ մենաստանում պահվում էին «սուրբ Նշանիս, որ կոչի Գետարգել» ու «սուրբ Զարաւարի և մեծ վկայի, Քրիստոսի նահատակի, Սուրբ Սարգսի և նրա որդի սուրբ Մարտիրոսի» մասունքները³¹: Հակոբ Ղրիմեցին իր «Մեկնութիւն տոմարիս» գրքի հիշատակարանում վկայում է, թե Չագավանքում հավաքված են բազմաթիվ այլ սրբեր «ընդ հովանեաւ սուրբ Գետարգելիս և սուրբ Սարգիս Կուրանց կոչեցեալ և սուրբ աջս Կիրակոսի»³²:

XIX դարի ռուս-պարսկական, ապա ռուս-թուրքական պատերազմների շրջանում հայոց վանքերը կորցնում են շատ ձեռագիր մատյաններ, եկեղեցական անհամար սպասք և սրբերի մասունքներ, որոնցից մի քանիսը, ինչպես գրում է Մ. Սմբատյանցը, Էջմիածնի կաթողիկոսարանը հետագայում դժվարությամբ, մեծ փրկագնով, կարողանում է ձեռք բերել: Հիշյալ մասունքներից են նաև Գետարգելի սուրբ Նշանը³³:

Այսօր Չագավանքի հուշարձանախումբը մեզ է ներկայանում VII դարում կառուցված եկեղեցիով և դրանից մի փոքր հյուսիս՝ բլրալանջի վրա, արտաքուստ և ներքուստ քառակուսի հատակագծով երկհարկանի դամբարան եկեղեցիով, միջնադարյան գերեզմանատնով և վանական ու տնտեսական զանազան շինություններով: Եկեղեցիների անուններն են՝ Սուրբ Գևորգ, որ, հավանաբար, պետք է VII դարի Սուրբ Նշան եկեղեցին լինի, և մյուսը՝ Սուրբ Կարապետ՝ երկհարկանի դամբարան եկեղեցին: Սուրբ Նշան կոչվող եկեղեցին կառուցվել է VII դարի սկզբին կամ ավելի վաղ, քանի որ, համաձայն 1834 թ. Հայսմավուրքի հիշատակարանի, նահատակ Դավիթ Դվնեցուն թաղելուց հետո խաչը տանում են Չագ գյուղաքաղաք և կանգնեցնում տեղի եկեղեցում³⁴:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 291:

³⁰ Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 203:

³¹ Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 336:

³² Նույն տեղում, էջ 334:

³³ Նույն տեղում, էջ 336:

³⁴ Յայսմավուրք վկայութիւն սրբոյն Դավթի Դվնեցոյն, էջ 143:

Այդ իրողությունը հաստատում է նաև 1481 թ. Ավետարանի հիշատակարանի հետևյալ վկայությունը. «Տվի Աւետարանս զայս Չագա եկեղեցուն ի դուռն սրբոյ Դաւթի քաջ նահատակին»³⁵: Եկեղեցին պատկանում է VII դարի խաչաձև գմբեթավոր եռախորան փոքր հուշարձանների տիպին³⁶: Այն արտաքուստ բազմանիստ է, իսկ ներքուստ ունի խաչաձև հաստակագիծ: Շինությունը կառուցված է սև տուֆից, որի ստորին շարերից պահպանվել են որոշ հատվածներ: Շինության արևելյան և հարավային կողմերից պահպանվել են երկու-երեք շար, ներքուստ՝ պայտաձև գլխավոր խորանի չորս, և աջ անկյունից՝ տեղ-տեղ հինգ-վեց շարեր: Գլխավոր խորանը կենտրոնում 2 մ բարձրության վրա ունեցել է փոքրիկ պատուհան, որից մնացել են աջ կողմի երկու շարերը: Գլխավոր խորանի սկզբնամասերի որմնասյուների բարձրությունը մոտավորապես 1,5–2 մ է: Պահպանված որմնասյուների խարխիսները վկայում են միջնադարյան քարգործ վարպետների նուրբ և հրաշալի աշխատանքի մասին:

Համաձայն Հովհաննես արեղայի հիշատակարանի՝ այս եկեղեցին կոչվել է նաև կաթողիկե «ս. Գևորգ և ս. Սարգիս»³⁷: Այս մտքի արժանահավատությանը լրացուցիչ կովան կարող է հանդիսանալ նաև Ստեփանոս Վարազեցու հիշատակագիրը. «հովանեաւ սուրբ Նշանիս, որ կոչի Գետարգել և սուրբ եկեղեցեացս, որ կոչի սուրբ Գեորգ»³⁸:

Սուրբ Նշան եկեղեցուց մի քանի մետր հյուսիս-արևելք գտնվում է սրբատաշ դարչնակարմրավուն տուֆից կառուցված երկհարկանի եկեղեցին, որ թվագրվում է XIII դարով: Ճարտարապետական հորինվածքով նման է Նորավանքի Բուրթեղաշեն երկհարկանի եկեղեցուն: Առաջին հարկում, ներքուստ քառակուսի հաստակագծով և քառակուսի փոքրիկ բեմով, հյուսիսային և հարավային պատերին, խորանին մոտիկ պահպանվել են երկու փոքրիկ պա-

³⁵ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 14:

³⁶ Հայկական սովետական հանրագիտարան, հ 6, Երևան, 1980, էջ 685, Վ. Գրիգորյան. Վ. Գրիգորյան. Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձաններ, Երևան, 1982, էջ 26: Մ. Հասրաթյանը նշում է, որ եկեղեցուն հյուսիսից և հարավից կից են նրա հետ ընդհանուր գետնախարխիս ունեցող փոքրիկ երկու մատուռներ (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, էջ 685): Իսկ Վ. Գրիգորյանը գրում է, որ արևմտյան խաչթևի կից կան մեկական օժանդակ սենյակներ, որոնք ավելացվել են հետագայում՝ XII-XIII դդ.: Վ. Գրիգորյանը մանրագին քննել է հուշարձանի ճարտարապետական առանձնահատկությունները, նշելով թե հուշարձանը, հաստակագծային լուծման համաչափություններով առնչվում է Լուսազուղի Թուխ Մանուկին, իսկ խաչթևերի արտաքին ծավալների բազմանիստ մշակմամբ՝ Ալամանի, Դորբանտի, Ջրառատի եռախորան կառույցների հետ: Հեղինակը հուշարձանը մեկ համարում է կառուցված VII դարի սկզբին, հիմնավորելով «մուտքի որմնասյուների հետագայում հավելված լինելու հանգամանքով» (Վ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 26), իսկ մյուս դեպքում՝ համեմատում է Լերքին Թալինի, Չագավանքի, Վանքասարի, Արզնիի և Հնեվանքի եկեղեցիների հետ, որոնք կառուցվել են VII դարի երկրորդ կեսին (տե՛ս նույն տեղում, էջ 31): Լերքին Թալինի՝ Մբ. Քրիստափորը, որ ճարտարապետական հորինվածքով համարվում է VII դարի շինություն, իր չափերով և կառուցվածքով նման չէ Չագավանքի Մբ. Նշանին: Հավանական է, Չագավանքի Մբ. Նշանը պետք է թվագրել ավելի վաղ:

³⁷ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 334:

³⁸ Նույն տեղում:

տուհաններ՝ վերնամասում սնամեջ գլանաձև զարդամոտիվներով: Կառույցն արտաքուստ ունի 5x5 մ չափեր, երկրորդ հարկը չի պահպանվել: Գ. Հովսեփյանը, խոսելով Եղվարդի՝ Շահիկ վարդապետի ձեռքով 1301 թ. կառուցված կրկնահարկ, գմբեթավոր եկեղեցու մասին, այն համարում է բացառիկ երևույթ հայ ճարտարապետության մեջ: Եվ քննելով նմանատիպ ճարտարապետական մի շարք կառույցներ՝ Նորավանքի Բուրթելաշենը (1301–1346), Կարսի Առաքելոց եկեղեցու զանգակատան (1398) հորինվածքները, նշում է նաև Գետարգելի վերոհիշյալ շինությունը, վերջինս թվագրելով 1325 թվականով: Հեղինակի այս թվագրումը պայմանավորված է տաճարի արևմտյան ճակատի՝ Զաքարյան Ավագի որդի Զաքարեի արձանագրությամբ³⁹: Նկատենք, որ տվյալ շինությունը չէր կարող կառուցվել 1301 թ. ուշ, քանի որ եկեղեցու հարավային պատին, արտաքուստ փորագրված է 1293 թ. Գրիգոր Անավարգեցի կաթողիկոսի արձանագրությունը: Հետևապես, եկեղեցին 1293 թ. արդեն կանգուն էր: Հուշարձանը ճարտարապետական կուռ հորինվածքով, կառուցողական վարպետությամբ, հասկապես արևմտյան ճակատի զուսպ, փոքրիկ, նրբահույս գորգանման խաչերի զարդամոտիվներով, շքամուտքը երիզող գլանաձև որմնասյուների հորինվածքով, անկասկած, հմուտ ճարտարապետի աշխատանք է: Հուշարձանի հյուսիսային որմին կա հրաշագեղ մի կցագիր արձանագրություն՝ կազմողի մակագրությամբ: Կցագիրը վերծանվում է՝ «Ծատուր, Աստուածատուր կազմող»⁴⁰: XIII դ. վերագրվող այս շինությունը մեզ է հասել համարյա թե կիսականգուն վիճակում՝ խոնարհված են միայն արևելյան պատը, երկրորդ հարկը, իսկ արևելյան կողմում պահպանվել են մեծածավալ գմբեթի որոշ մասեր: Շինության առաջին հարկը ներքուստ, տեղտեղ վնասվածքով մեզ է հասել ամբողջությամբ, և նախնական տեսքով պահպանված ողջ թաղը՝ բացառությամբ մեջտեղից ընկած երկու-երեք քարի, ու կամարն իր սկզբնական տեսքով անխաթար վիճակում է, առանց վերանորոգումների: Արևմտյան, հյուսիսային և հարավային պատերին, որոնց բարձրությունը հասնում է մոտ 3,5-4 մ, երկրորդ հարկ բարձրանալու աստիճանների հետքեր չկան, ինչպես դրանք առկա են Նորավանքի Բուրթելաշեն, Կապուտանի և Եղվարդի եկեղեցիներում:

Չագավանքում հնագիտական հետազոտական աշխատանքներ կատարելու ժամանակ ի հայտ են եկել բազմաթիվ շինարարական մանրամասներ, որոնցից մի քանիսն ունեն նաև հիշատակագրեր: Այդ արձանագրություններից շատերը թերի են: Հուշարձանախմբից հրատարակված են միայն Ս. Կարապետ երկհարկանի եկեղեցու երեք մեծածավալ արձանագրությունները:

³⁹ Գ. Հովսեփյան. Ազիզբեկյանք և նրանց շինարարական գործը. – «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, Երևան, 1921–1922, էջ 196:

⁴⁰ Ս. Բարխուդյան. Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 183: Հեղինակը համարել է XVII դ. փորագրություն, սակայն Ս. Մաղումյանը, ընդունելով գիտնականի նույնական վերծանությունը, ոճական և կատարողական առանձնահատկություններից էլնելով, համարել է Առինջի XV դարի քարգործ վարդապետ Աստուածատուրի գործը (տե՛ս Ս. Սահյանի մ. Փակագրությունը հայ վիմագրության մեջ. – «Լրաբեր», 1980, № 3, էջ 78):

Չազավանք հուշարձանախմբից ստորև ներկայացնում ենք նորահայտ արձանագրությունները, որոնք հրատարակվում են առաջին անգամ⁴¹: Վերջիններս այս կամ այն չափով ամբողջացնում են մշակութային այս կենտրոնի անցյալի պատմությունը: Քննարկվում են նաև նախկինում հրատարակված Չազավանքի երեք վիմագրերը, որոնց վերծանումներում կատարել ենք սրբագրման և վերընթերցման աշխատանքներ:

1. Խաչքարի բեկոր, ագուցված վերջին ժամանակներս կառուցված պարսպանման պատին, քիվին մեկ տող, թվականը կոտրված է.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐ[Ե]ԽԱ[ԻՍ Է] ԴԱՎԹԻՆ (նկ. 2):

2. Նախորդի կողքին մի այլ խաչքարի բեկոր, քիվին մեկ տող.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ Բ[ԱՐ]ԷԽԱԻՍ Է ԱՍԼԻԶԱՏԻՆ (նկ. 3):

3. Ս. Նշան եկեղեցու հյուսիսային կողմում գետնին ընկած կարմիր տուֆից խաչքարի մաս, վերնից և ներքնից կոտրված, հավանական է, այն պատվիրել և կանգնեցրել է Սիմեոն բաբունապետը, քանի որ կոթողն իր չափերով բավականին մեծ է: Հիշատակագիրը պայտաձև բոլորում է խորադիր խաչը, արձանագրությունը եղծված է ու թերի.

... ՍՈՒՏ ԵՎ ԱՆԱՐԺԱՆ ՊՈՌԻ... ԴԱՅ...ՈՐ...ՅՈՒՀԱՆԷՍ ԿԱԶՍ[ՈՂ] (նկ. 4):

ԱՆԱՐԺԱՆ բառում ժ տառը հակառակ է փորագրված:

4. Հիշատակագրություն ունեցող երկու մեծ շինաքարերի վրա պահպանվել է յոթ տողանոց հետևյալ արձանագրությունը.

1. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՍԱՍՈՒԵԼՍ ՈՐԴԻ ՎԱՀՐԱՄՍ
2. ԳՆԵՅԻ ԶԻԹԱՀԱՆԱՅ ԲԱԿԻՆ ՏԵՂՆ ՍԼՔԱՏԻ
3. ՇԻՆԵՅԻ ԵՎ ՏՎԻ ՎԱԽ[Ս]...ՈՒՄՆ ԶԻԹԱՀԱՆՔՆ
4. ԶԻՄ ԲՈՂՉԷՆ ԵՎ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԲԱՂՉԷՆ ՈՐ [ԳՆԵՅԻ ԵՎ ՏՎԻ]
5. ԳԵՏԱԴԱՐՁ ՍԲ ՆՇԱՆԻՍ ՅԻՇՍԱԿ ԻՆՁ ԵՎ ԾՆՈՂ[ԱՅ ԻՍՈՑ ԵՎ]
6. ԿԱՏԱՐՈՂՔՆ ԱԻ[ՐՀՆԻՆ]՝ԱՅ ՈՐ ԽԱ- ——— ԲԱՆԻ ԳՃԺԸ
Հ[ԱՅՐԱՊԵՏ
7. ԱՅՆ] ՆՁ Ո [ՎԱԾ Է] (նկ. 5):

Արձանագրությունը նվիրատվական և շինարարական բնույթի է, տառերը բավականին մեծ են, գեղեցիկ գրությամբ և փորագրված են մի փոքր շեղությամբ: Վանական համալիրը, համաձայն արձանագրության, կոչվում է Գետա-

⁴¹ Արձանագրությունները տեղում ուսումնասիրելու աշխատանքներին աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Առինջի բնակիչ բարերար Գագիկ Ծառուկյանին:

դարձ, և Վահրամի որդի Սամվելը վանքի Սբ. Նշան եկեղեցու համար գնել է Մլքատից «ձիթահանաց բակին տեղը», ուր, հավանաբար, վերաշինել, նորոգել է, և վախճան է տվել մի հասութաբեր ձիթահան: «ՇԻՆԵՑԻ» բառն այստեղ պետք է հասկանալ վերակառուցել, վերաշինել իմաստով: Այնուհետև կատարել է մեկ այլ նվիրատվություն ևս՝ տալով «բողջա» և Մարտիրոսի բախչեն, որ, ամենայն հավանականությամբ, նա պետք է նաև գնած լիներ, որովհետև շարունակությունում փորագրված է «Գետադարձ սբ Նշանիս հիշատակ իր և ծնողաց» արտահայտությունը, պետք է վերականգնել «գնեցի և տվի» բառերը: Մ. Սմբատյանցը գրում է, որ Չագավանքը որպես սեփական ունեցվածք Ավանում ունեցել է երեք բաղջա. «Ի յԱւան գեղօն ունի գերիս բաղջայս»⁴²: Վավերագիրը վերջանում է անեծքի և օրհնության խոսքերով, որից կարելի է հետևություն անել, թե պատվիրատուն, հավանաբար, գնել է նաև մի քանի պատարագ, որը փորագրողը բաց է թողել: Մլքատ անունը Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» չկա, սակայն կա Մլքան ձևը՝ որպես արական անուն: Եթե մեր օրինակում գրչի սխալի հետևանք է, և պետք է նույնպես լինի Մլքան, ապա վերջինս հայտնի է Հավուց Թառի մի արձանագրությունից՝ որպես Պահլավունյաց տոհմից մի տիկնոջ անուն⁴³: Հր. Աճառյանը Մլուք կամ Մուլուք աստղանիշով օտար բառը ծագած է համարում արաբ. *muluk* բառից, որ նշանակում է թագավորներ, նրա կրճատ ձևն է Մլքան, գործածված է XIII–XIV դարերում⁴⁴: Մեր հիշատակագրում սերը հայտնի չէ:

5. Հաջորդ արձանագրությունը ամբողջական է, շինաքարի վրա քանդակված է գեղաքանդակ խաչ, հիշատակագիրը բաղկացած է երեք տողից.

1. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ԽՈՑԱՅԴԵՂՍ

2. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՄԱԹՈՍ ՈՐԴԻ ՏՐ ԶԱՔԱՐԻՆ

3. ԻՄ ՇԽԻՃԱՆԻ ՅԻԳ [ին] ԵՏՎԻ ՎԱԽՍ ԳԵՏԱՌԳԵԼ [ին] ԹՎԻՆ ՌԱ (1552 թ.) (նկ. 6)

Վիմագրում առանձին հետաքրքրություն է ներկայացնում ետվի բայը: X–XIII դդ. արձանագրություններում նկատվում են ե/ե աճականի կիրառության անկանոն դեպքեր: Այդ նախահավելվածը, ինչպես նշում է վիմագրագետ Ս. Ավագյանը, ունենում են անցյալ կատարյալ ժամանակի բայաձևերը՝ անկախ վանկերի քանակից, առաջին, երրորդ դեմքերում, հոգնակի և եզակի թվերում⁴⁵: Տալ բայի անցյալ կատարյալի եզակի թվի առաջին դեմքի է նախահավելվածի օրինակ է վկայված Անիի Առաքելոց եկեղեցու 1058 թ. արտոնագ-

⁴² Մ. Ս մ բ ա տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 244:

⁴³ Գ. Ս ա բ գ ս յ ա ն. Վիմագրական նորություններ. – «Հանդես ամսօրյա», Վիեննա, 2001, էջ 240: Մլքան իգական անունը հայտնի է Հաղբատի վանքի XIII դ. մի արձանագրությունից. «Ես Մլքան, ամուսին Վասակա...» (Գ. Ղ ա Ֆ ա դ ա բ յ ա ն. Հաղբատ ճարտարապետական կառույցները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 227):

⁴⁴ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1946, էջ 364:

⁴⁵ Մ. Ա վ ա գ յ ա ն. Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986, էջ 136–141:

րում. «ԻՇ:Լ:Է Ի Թուականութեան Հայոց եւ Գրիգոր:Ն: 400 դրամ Էտվի ի սր Ա-
նաքէլս»⁴⁶: Նոր Վարագավանքի XII դ. արձանագրությունում փորագրված է
«Ես տր Յովաննէս հրամանաւ պարոն Վասակա և ամենայն եղբարցս ետ-
վաք»⁴⁷: Վախմ՝ «իբրն բարեպաշտական նուէր եկեղեցական կուտակուած հող
կամ կալուած», վաղագույնս օգտագործված է Սևանի Անաքէլոց եկեղեցու 874
թ. արձանագրությունում, ուր եկեղեցու մեկենաս Սյունյաց Մարիամ իշխա-
նուհին և իր հայր իշխանաց իշխան Աշոտ Ա Բագրատունին, որն այդ ժամա-
նակ թագավոր էր, վանքին վախմ են տալիս Վարսեր, Գոմաձոր, Յամաքա-
բերդ, Բերդք, Ուռեացտափ գյուղերը: Այն գործածված է նաև 1183 թ. մի արձա-
նագրության մեջ⁴⁸:

6. Հաջորդ արձանագրությունը բաղկացած է հինգ տողից, ունի փոքր տա-
ռածներ, թերի է, նույնպես փորագրված է շինաքարի վրա.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է ՓԻԼԻՊՈՍ Եպիսկ[ՈՊՈՍԻՆ]: [ԵԻ] ԳՐԻ-
ԳՈՐ ԵՐԵ[ՅԻՆ] ՈՐ ԳՆԵՅԱՆՔ ՅԱՎԱՆ ՅԻԳԻՆ, [ԵԻ] ՏՎԻՆ...:

Օրինակում հետաքրքրություն է ներկայացնում գնեցանք բայի գրությունը:
Այն բարբառային արտահայտություն է ն-ի հավելագրությամբ, պետք է լիներ
գնեցաք ձևով, և տվին բայաձևը պետք է գրված լիներ տուաք ձևով: Եպիսկո-
պոս բառը փորագրված է հապավումով եպկ, պ տառը փորագրվել է Փիլիպոս
անվան պ-ի նման, որ կարողում ենք եպիսկոպոս, իսկ երեցը փորագրված է
կցագիր ձևով:

7. Սբ. Նշան եկեղեցու արևմտյան շքամուտքին կից փորագրված է ինը տո-
ղից արձանագրություն: Ցավոք, շարվածքի, որի վրա փորագրված է արտոնա-
գիրը, մյուս հատվածներն ընկած են, ուստի հիշատակագիրը չի ամբողջա-
նում.

ԵՍ ԾԱՌԱՄ ԱՅՄԻԱՅԲԱՆԵՅԻ ԶԱԻՐԱԻԱՐԻՍ...ՎԱՆԱՅՍ...ԵԿ Ա-
ՄԷՆ ԵԻ.....ՍՊԱՍԱԻՈՐՔՍ ԽՈՍՍԱՅԱՆ Ի ՏԱՐԻՆ :Ա: ԱԻՐ ՊԱՍԱՐԱԳ, ՈՎ
ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի Տեարնէ ԱՄԷՆ Ի ՏԱԻՆԻ ՔԱՌԱՍՆԻՑ (նկ. 7):

8-11. Սբ. Նշան եկեղեցու շրջակայքում թափված են խաչքարերի բազմա-
թիվ բեկորներ, որոնցից մի քանիսի քիվերին կան արձանագրություններ:
Դրանք հետևյալն են.

8. Խաչքարի բեկոր. Ս[ՈՒՐ]Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է... (նկ. 8):

9. Խաչքարի բեկոր. Ս[ՈՒՐ]Բ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է ԽԱՉԱՏՈՒՐԻՆ:

⁴⁶ Դիվան հայ վիմագրության, պր. I, կազմ. Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 13:

⁴⁷ Ս. Ա վ ա գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 136:

⁴⁸ Կ. Ղ ա Ֆ ա դ ա ր յ ա ն. Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 88:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 8



Նկ. 7

10. *Խաչքարի բեկոր. Ս[ՈՒՐ]Բ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԱՆՏՈՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ (նկ. 9):*

11. *Խաչքարի բեկոր. Ս[ՈՒՐ]Բ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ՍՈՒԼԹԱՆ ՂՈՒԼԻՆ (նկ. 10):*

Վերջին խաչքարի վրա փորագրված է նաև կազմողի անունը՝ ԿԱԶՍՈՂ ՅՈՒՀԱՆԷՍ: Այս խաչքարի արձանագրությունն աչքի է զարնում իր հնագրությանը ու կցագրությանը, իսկ խաչքարը՝ երկրաչափական և բուսական զարդամոտիվների ճոխությամբ:

12. *Սբ. Նշան եկեղեցու բակում պատվանդանի վրա կանգնեցված է մեծ խաչքար: Կոթողի խաչաքանդակի հորիզոնական խաչաթևերի ստորին մասերում փորագրված է միայն թվականը. ԹՎ ՋԵ (1456):*

Նույն եկեղեցուց հարավ-արևելք կառուցված է մի փոքրիկ մատանման շինություն, որի պատերի մեջ օգտագործված են բազմաթիվ խաչքարեր և քանդակագարդ շինաքարերի բեկորներ:

13. *Մատուռի պատի մեջ ագուցված է խաչքարի բեկոր, քիվին մեկ տող արձանագրությանը (հրատարակվում է առաջին անգամ):*


Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉ[Ս] ԲԱՐԵԽԱԻՍ Է ՈՀԱՆԷՍ ԱԲԵՂԱՅԻՆ: ԹՎ[ԻՆ] ՋԻ (1471):

14. *XIII դարի եկեղեցին հարուստ է շատ կարևոր արձանագրություններով, որոնցից մի քանիսը հայտնի են հայագիտությանը: Դրանցից է արևմտյան շքամուտքին փորագրված տասնհինգ տողանոց հետևյալ արձանագրությունը.*

1. ԹՎ[ԻՆ]: 227 : (1325)
2. Ի ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ՋԱՔԱՐԻԱ
3. ԹՈՌՆ ԱԻԱԳԻՆ : ՄԵՔ ԴԱԻԻԹ
4. ԵԻ ՎԱՀԱՊ ԵԻ ՓԱԹԱ : ԵԻ ՈՐԴԻՔ ՄԵՐ
5. ԲԱՀԱԴԻՆԻՆ ԵԻ ՈՐԴԻՔ ՄԵՐ ՍԱՏՐ -
6. ԻԿ ԵԻ ԲԱՀԱԴԻՆ ԵԻ ԱԻԴՈՒԼԱ Վ[ԱՍ]Ն ՅՈՒ-
7. ՍՈՅՆ ՈՐ ԱՌ ԱԾ, ԵԻ ՄԵՐ ԱՐԵԻՈՒՍ ՀԱՄԱՐ
8. ԹՈՂԱՔ ՉՎԱՆԱՅ ԿՈՌՍ, ՉՄԱՐԴՈ, ԵՉ-
9. ԻՆ, ԻՇՈ ԵԻ ՉԱՄԵՆԱՅՆ ՑԵՂ ԿՈՌ ԵԻ ՉՀԱՍԱՐԱ
10. [Կ Ի ՏՈՒՐ]ՔՍ ՄԻԱՅՈՒՑԱՔ, ԹԷ ՈՔ Ի ՄԵՐ-
11. [ՈՅ ԿԱՍ ԱԻ]ՏԱՐԱՅ ԿԱՍ ԱԻԱԳԱՅ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱ
12. [ՄԵ]Ր ԱՉԳԻ ՄԵՂԱՅՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԵԻ ՅԵՐ-
13. ԻՑ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ ՆՁՈՎԱԾ: ՉԿԱԵՆԻՆ ԵԻ
14. ՉՈՒԴԱԻՆ ԺԱՌԱՆԳ Է, ԵԻ ԱՄԵՆ ԱՉԳ-
15. ԱՅ ՆԱԼԱԹ ԼԻՆԻՔ, ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻ[Ր]ՀՆԻՆ ՅԱՅ (նկ. 11):



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 13



Նկ. 12



Նկ. 14



Նկ. 15

Այն իրավատնտեսական բնույթի վկայագիր է, կոտրված հատվածը վերականգնում ենք ըստ Ս. Ավագյանի վերծանության: Քննվող արտոնագիրը իր բնույթով եզակի է նաև նրանով, որ իրավական-տնտեսական այդ կարևորագույն ակտն իրականացվել է տեղական «իշխանիկների» կողմից, մինչդեռ այլ վկայագրերում նմանատիպ իրողությունները կատարվել են բյուզանդական բարձր պաշտոնատար անձանց կողմից՝ համաձայնեցնելով տեղական սյուզերեն տիրակալների հետ: Նման բնույթի վավերագրերը ավատական տնտեսության հիմնական եկամտի՝ հավելյալ արժեքի անկման ուշագրավ օրինակներ են: IX–XI դդ. վավերագրերում նկատվում է, որ հարկերի թողությունը, թափելը և օտարումը կատարվել է ֆեոդալական ավագանու, գերակա տիրակալի կողմից, իսկ XII–XIV դդ. արձանագրություններում ի հայտ են գալիս տարբեր գործավորներ՝ տամղաչիներ, ձեռնավորներ: Բնչպես նկատել է ակադ. Բ. Առաքելյանը, հարկերի թողության հրամանը բյուզանդական կատապան (կամ՝ կատեպան) Ահարոնը բերել էր Կոստանդնուպոլսից և տեղի՝ Անի քաղաքի ավագանու համաձայնությամբ վերացրել մուհթասիբին վճարվելիք հարկը: Այդպես է նաև նմանատիպ այլ վիճագրերում: Օրինակ, ըստ Անիի Առաքելոց եկեղեցու ՈՂԶ (1227) արձանագրության, Գրիգոր արքեպիսկոպոսը վերացրել է՝ «գհարկ քահանայից քաղաքին»⁴⁹: Գրեթե նույն բովանդակությունն ունի նաև Բագրատ Վիկացի Մագիստրոսի թողած արձանագրությունը⁵⁰:

Առաջին անգամ խնդրո առարկա արձանագրությունը վերծանել է Հ. Շահխաթունյանցը, որից օգտվել է Կ. Կոստանյանցը՝ այն զետեղելով «Վիմական տարեգրում»⁵¹: Շահխաթունյանցը 6-րդ տողում վերծանել է. «աւրուլաւայու սոյն որ...», 10-րդ տողում՝ «...քո միացուցաք, թե ոք ի տերանց»⁵²: XIX դ. տեղագիր Մ. Մմբատյանցը, լինելով հնավայրում, իրականին համապատասխան, աննշան թերությամբ վերծանել է հիշյալ արձանագրությունը, սակայն բաց է թողել «և ամեն ազգաց նալաթ լինիք» անեծքի հատվածը⁵³: Նորագույն ուսումնասիրողներն անդրադարձել են այդ արձանագրության հասարա տառաշարքին, այն դիտելով մեկ՝ որպես տուրքային տերմին, բնակչությունից գանձվող անասնահարկ, մեկ՝ քաղաքների կամ ամրոցների պարիսպներ կառուցելու, կամ վերականգնելու պարտավորություն⁵⁴: Վերոհիշյալ բառը քննել է նաև լեզվաբան, հմուտ վիճագրագետ Ս. Ավագյանը, որն իրեն բնորոշ հմտությամբ վերականգնել է վիճագրի այդ մասի ջարդված տառերը և բոլորովին նոր բովանդակությամբ, ասվածը հաստատող բազմաթիվ օրինակներով

⁴⁹ Դիվան հայ վիճագրության, պր. 1, էջ 18:

⁵⁰ Նույն տեղում, էջ 37:

⁵¹ Յ. Շ ա հ խ ա թ ու ն ե ա ն ց. Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի հինգ զաւառաց Արարադայ, հ. Բ, Ս. Էջմիածին, 1842, էջ 444, Կ. Կ ո ս տ ա ն ե ա ն ց. Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 161, Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 292:

⁵² Յ. Շ ա հ խ ա թ ու ն ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 444:

⁵³ Ս. Ս մ բ ա տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 241:

⁵⁴ Բ. Ա ո ն ք է լ յ ա ն. Քաղաքները և արհեստները միջնադարյան Հայաստանում 9-13 դդ. հ. Բ, Երևան, 1964, էջ 232:

վերծանել այն⁵⁵: Արձանագրության 4-րդ տողում նա վերծանել է. «Վահապ և Բատա». Փատ անունը հեղինակը կարդացել է շնչեղ պայթական բաղաձայնով⁵⁶: Պետք է նկատել, որ անվանի գիտնականի շտկած 9-րդ տողը, այն է՝ «գհասարա» բառին ավելացրած Վ տառը իր ժամանակին վերականգնել է նաև Սմբատյանը, սակայն հաջորդ հաստիվածները բաց է թողել: Մ. Սմբատյանը 9-րդ տողի վերջը և 10-րդ տողի սկիզբը վերծանել է «ի տերանց կամ աւտարաց»⁵⁷, իրականում պետք է լինի. «թէ որ ի մերոց կամ աւտարաց» ձևով: Այս արտոնագիրը վերծանել է նաև Գ. Հովսեփյանը: Անվանի հայագետը արձանագրության 2-րդ տողը վերծանել է՝ «ի պարոնութե Չաքարին թոռին», իսկ 5-րդ տողում «Ահադանին» և 6-րդ տողում «Բահադին», 9-րդ տողում՝ «գամ ցեղ», 12-րդում՝ «յերից» ձևով⁵⁸: Ուսումնասիրողները բաց են թողել 4-րդ տողի վերջի և 5-րդ տողի սկզբի բառերը՝ դրանք համարելով կրկնողություն: Թեև Չագավանքի արձանագրություններում, օրինակ՝ թիվ 5-ում, փորագրող գրիչը միևնույն տեքստում նույն տողը երկու անգամ է փորագրել, սակայն տվյալ բառակապակցությունը «որդիք մեր Բահադինին», առանձին, ինքնուրույն տող է, քանզի 6-րդ տողում Բահադին անունը դրված է ուղղականով: Չի կարելի նաև իսպառ բացատրել, որ այս դեպքում էլ փորագրչի կողմից վրիպում է եղել:

Չաքարյան Ավագի թոռ Չաքարիայի պարոնության ժամանակ, տեղական իշխանիկներ՝ Դավիթ, Վահապ, Փաթա եղբայրները և նրանց որդիները՝ Սատրիկը, Բահադինը և Աղուլան վերացնում են վանքի կոռը՝ մարդու, եզան, էջի և ամեն տեսակ կոռ՝ «ԶՀԱՍԱՐԱԿ Ի ՏՈՒՐՔՍ ՄԻԱՅՈՒՅԱՔ», այսինքն՝ կոռային աշխատանքները փոխարինվել են մեկ այլ հարկատեսակով՝ բնամթերային տուրքով⁵⁹: Ինչպես այս, այնպես էլ մի շարք այլ հիշատակագրեր վկայում են երկրամասի զարգացած երկրագործական և անասնապահական տնտեսության մասին: Երկրագործության մեջ կարևոր դեր ունեւր քաշող ուժը՝ եզր: Եվ բնական է, որ երկրամասի անասնապահական տնտեսությունը զարգացնելու համար, Չաքարյան իշխանները, կարևոր «բարեփոխման անվան տակ», զիջում կամ թողնում են անասուններից գանձվող հարկը: 1058–1060 թթ. Անիի Մայր տաճարի արևմտյան պատի արձանագրությունում բյուզանդական կառավարիչ, արևելից կատեպան Բագրատ մագիստրոսը և նրա գործակալները սիրաշահելով Անիի ընչազուրկ բնակչությանը՝ նվազեցնում են բազմատեսակ ծանր հարկերն ու պարտույթները՝ զիջելով նրանց գուրթանի, սայլի, կամի, անագորիոն՝ փոստային փոխադրամիջոցի կոռը, ինչպես նաև թեթևացնում շուկայում վաճառվող ապրանքներից գանձվող բաժը⁶⁰: Եզրից գանձվող այս հարկը, հավանական է, նույնանուն է «եզան թաղարի», «եզան շարիատի» և «վեցիկո թաղարի» հետ: Ըստ Մխիթար Գոշի Դատաստա-

⁵⁵ Մ. Ա Վ ա գ յ ա ն. Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978, էջ 184:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Մ. Ս մ բ ա տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 241:

⁵⁸ Գ. Հո վ ս ե փ յ ա ն. Ազիզբեկյանք և նրանց շինարարական գործը, էջ 191:

⁵⁹ Մ. Ա Վ ա գ յ ա ն. Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 185:

⁶⁰ Դիվան հայ վիմագրության, պր. I, էջ 37:

նագրքի՝ «Եզին այլ հարկ մի լիցի զի այն իսկ է, զոր աշխատեալ հնգեկի»⁶¹: Գառնիի հեթանոսական տաճարի մուտքի վրա փորագրված ընդարձակ արձանագրությունում, Ջաքարյան Խոշաքի որդի Ջաքարիան հիշվում է ամիր-ամիրա տիտղոսով. «Չի թվականութե ես Խոշաք դուստր Աթապակին որդո Աթապակ Իւանէի որդո մեծին Սարգսի և իմ որդին Ամիր Ջաքարէ գիր տուաք»⁶²: Ջաքարյան Ավագի թոռ Ջաքարիային, հայագետ Գ. Հովսեփյանը համարում է ծագումով մոնղոլ, սակայն «քրիստոնեություն ընդունած և հայացած»⁶³: Իսկ Հ. Մանանդյանը նրան համարում է «մահմեդական և ոչ քրիստոնյա»⁶³: Ջաքարիայի մայրը՝ Ջաքարյան Ավագի դուստր՝ իշխանուհի Խոշաքը, ամուսնացած էր Մուհամմեդ Շեմսեդդին Ջուվեյնու՝ Սահիպ Դիվանի հետ: Հայրը՝ Սահիբ Դիվանը, մահապատժից առաջ կտակում է Անիի Շահնշահյան թումանը⁶⁴: Ջաքարիայի իշխանությունը տարածվելիս է եղել Կոտայքի և Բջնիի սահմաններում:

15. Չագավանքի վանական հուշարձանախմբի երկհարկանի դամբարան եկեղեցու հարավային պատին, արտաքուստ, պահպանվել է չորս տողից բաղկացած ուշագրավ նվիրատվական մի արձանագրություն: Վիմագրությունը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ՝ նվիրատվությունը, հավանաբար, կաթողիկոսական կոնդակի միջոցով կատարել է Կիլիկիո հայոց կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցին (1293–1307): Եվ երկրորդ՝ բազմադարյան հայ վիմագրության մեջ «Հայոց Կաթողիկոսության» տիտղոսաշարում առաջին անգամ նշվում է «Ամենայն Հայոց Կաթողիկոսություն» ձևով: Արձանագրությունը փորագրված է բազմաթիվ կցագրերով, մի շարք հապաված բառերով, վայելչագեղ տառաձևերով, որոնք լավագույնս համապատասխանում են բարձրաստիճան պատվիրատուին.

1. ԹՎ...ԱՅ ԵՍ ԳՐԻԳՈՐ Կ[Ա]Թ[ՈՂԻԿՈՍ] ԱՍ[ԵՆԱՅՆ] Հ[ԱՅՈ]Յ, ԱՍ[ԵՆԱՅՆ] Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏԱԻՔ ԵՒ] ԵՊԻՍԿՈՊՈՍԱԻՔ ԵՒ

2. ՇՆՈ[Ր]ՀԵՅԱՔ ԶԱԳ ԸՆԾԱՅ [Գ]ԵՏԱԴԱՐԶ ՍԲ ՆՇԱՆԻՍ: ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍ

3. ՑԷ ՀԱԿԱՌԱԿԻԼ ՀՐԱՄԱՆԱՑ ՄԵՐ:

16. Վերջին ընդարձակ արձանագրությունը փորագրված է նույն եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ 2,5 մ բարձրության վրա, այն երեք տողից է.

⁶¹ Մ ի ի թ ա ր Գ ո շ. Գիրք Դատաստանի, Երևան, 1975, էջ 32, Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Գառնի 9–14 դարերում, Երևան, 1988, էջ 104:

⁶² Բ. Ա ն ա ք ե լ յ ա ն և Գ. Կ ա ր ա խ ա ն յ ա ն. Գառնի, հ. 3, Երևան, 1932, էջ 45:

⁶³ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Ազիզբեկյանը և նրանց շինարարական գործը, էջ 191, Հ. Մ ա ն ա ն ո ղ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. Գ, Երևան, 1977, էջ 338:

⁶⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 634:

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՄՈԾԱԿԵՆՑ ՄԿՐՏԻՉՍ ՉԱԳԱՎԱՆՈՒՑ ՀԱՆԴԵՆ ԳՆԵՑԻ ԵԻ ՏՈՒՎԻ ՎԱԽՍ ԳԵՏԱՐԳԵԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՍ, ՈՎ ՈՔ ԵՏ ԱՌՆԷ, ԳՃԺԸ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ՆՁՈՎԱԾ ԼԻՆԻ ԹՎԻՆ ՌՄԷ: (1758 թ.)⁶⁵:

1758 թ. Մոծակենց Մկրտիչը «Չագավանաց հանդամասը» գնել և ամրագրել, վախժ է արել Գետարգելի Սբ. Նշան եկեղեցուն: Ըստ Չաքարիա սարկավագի գրառած ավանդության՝ Մոծակենց ազգատոհմը վրացական ծագում ունի: Վրաց ազնվական դասից ստվար խումբ՝ որպես պատանդ, փոխանակվում են Հովհաննավանքում պահվող «Սուրբ Գեորգի» մասունքի հետ: Այդ իշխանագուներից ոմանք չեն ցանկանում վերադառնալ իրենց հայրենիքը. «ոմն գնաց յԵղեվարդ՝ Ազիպէկ անուն, և այժմ ասին Ազիպէմենք, ոմն գնաց ի Քանաքեռ՝ Մուցա անուն, և ահա կոչին Մոծակենք, ոմն գնաց ի Սոդնի՝ Խաչո անուն, և ահա կոչին Խաչիկենք»⁶⁶: «Չագավանաց հանդամաս» տեղանվան անվանում է:

17. Օրորոցաձև կարմիր տուֆից մի մեծ տապանաքար է դրված սբ. Կարապետ երկհարկանի եկեղեցու մոտ հետևյալ մակագրությամբ, որը տեղ-տեղ եղծված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԵՐ ԹՈՒՄԱՆԻՆ ՈՐԴԻ Մ... (նկ. 12):

18. Եվս մեկ նմանատիպ տապանաքար սև տուֆից ընկած է հնավայրից բավականին հեռու, հինգ հարյուր մետրից ավելի, այգիների մեջ: Հավանական է՝ տապանաքարի հնագրությունը պետք է թվագրել XV–XVI-րդ դարերով: Արձանագրությունը հետևյալն է.

ԱՅՍ Է ՀԱՆԳՍՏԱՏԱՊԱՆ ՄԱՀԴԱՍԻ ՂԱԶԱԸԻՆ:

19. Մեծ խաչքարի բեկոր՝ մեջտեղից ջարդված, քիվին մակագրությամբ (հրատարակվում է առաջին անգամ).

ԱՍՏՈՒԱԾ Ի ՏԵՐ ԹԱԹԷՈՍ ԿՈԹԱՅՆ (նկ. 13):

20. Խաչքարի բեկոր՝ բազմաթիվ ջարդոտված մասերի բաժանված, ռելիեֆային նուրբ գեղաքանդակ մակագրությամբ. ընթերցվում է հետևյալ մասը, քիվի վրա փորագրված.

...ՐԽԱՆԻ ՈՐԴԻ ԱՂԱ ՊՈՂՈՍԻՆ, միջնամասում ԿԱԶՄՈՂ բառերը (նկ. 14):

⁶⁵ Մ. Մ մ բ ա տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 241:

⁶⁶ Չաքարիայ Սարկավագի Պատմագրություն, հ. 3, Վաղարշապատ, 1870, էջ 43:

21. Շինարարների վրա կան արձանագրությունների բազմաթիվ մակագրություններ, որոնցից բերում ենք միայն մեկը (հրատարակվում է առաջին անգամ)։

....ՈՐ ԻՄ ԵՐԵՅ...ԵԻ ՏՈՒԻ ԶԱԳԱՎԱՆՔԻՆ ...ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՁ Ի ՏՄԸԻՆ...ՈՐ ՀԱԿԱՌԱԿԷ ԻՆՔ...ՆԱՄՄԱԸԴ (նկ. 15):

Երկհարկանի Մր. Կարապետ եկեղեցու մոտ, հարավարևմտյան կողմից, պահպանվել են ինչ-որ կառույցի շինարարական հիմքի հետքեր, ուր, հավանական է, նախկինում կանգնեցված է եղել որմնափակ խաչքար:

Վանքը բավականին մեծ հողամասեր է ունեցել Ելդովանում և Շահաբում (Մայակովսկի), Ավանում, Չազ և Տաճարաբակ (Չորաղբյուր) գյուղերում: Ավան գյուղի մերձակայքում վանքն ունեցել է Կեչուտ կոչված հողակտորը, որը տարածվել է մինչև «ի խաչերն յԱւանայ»: Վերոհիշյալ հողամասը Չազ գյուղի գյուղացիները վաճառել են վանքին: «Հարիր սոմարի» մեծ հողակտոր է ունեցել նաև Շհայ գյուղում, որ ձգվելիս է եղել «Չազայ դոն», կամուրջի և ջրաղացների հարևանությամբ: Վանքը սեփականատիրական իրավունքով երկու այգիների տեր է եղել Երևան քաղաքում. վերջիններս ձգվել են Նորքի բարձունքից մինչև «ի վերայ Ղրխրուլաղու» գետը, որոնք սկզբից ներք վախում են արվել վանքին: Սակայն Երևանի Հաճի Ահմատ խանը զավթել է բերքառատ այգիները, և Մայր Աթոռ Էջմիածինը ստիպված է եղել դրանք վերստին ետ գնել մեծ փրկագնով: Չազավանք գյուղում վանքը՝ որպես սեփականություն, ունեցել է մեկ ջրաղաց, կալ, մարագ, գոմ և չորս պարտեզ: Իսկ «միւս Չազ գեղօն» ունեցել է մեկ ձիթհանք և երկու պարտեզ: Շհայ գյուղում ունեցել է մեկ տուն, մեկ մարագ, մեկ գոմ: Ավան գյուղում վանքի սեփականությունն է եղել «երիս բաղայս», որը գնել է Վարդան վարդապետը ավանցի Հայրապետի որդի Զաքարիայից, իսկ Առինջ գյուղում նա Արզրումի որդի Ահարոնից գնել է մեկ ջրաղաց և նվիրել վանքին⁶⁷:

КОМПЛЕКС ДЗАГАВАНКА И ЕГО ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ

РУБЕН ГАСПАРЯН

Р е з ю м е

Монастырь Дзагаванк – один из значительных научно-просветительских и культурных центров гавара Котайк ашхара Айратат. Наиболее ранняя церковь монастыря – постройка характерной для VII в. архитектурной композиции, где погребены останки мученика Давида Двнеци. Небольшая по размерам церковь снаружи четырехугольная, с восточной стороны многогранная, внутри крестообразная с подковообразной восточной апсидой. Портал находится на восточной стороне, слева от него сохранилась поврежденная двенадцатистрочная надпись. В северо-восточной части церкви возведена часовня VIII в. В ней хранился Святой Знак Гетаргела

⁶⁷ Տե՛ս Միսէօնէ կաթողիկոսէ Երևանցոյ Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 281: Մ. Մ մ - բ ա տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 243:

(*Գետարգելի Սուրբ Նշան*), благодаря чему комплекс получил новое название – церковь Святого Гетаргела. В 1270 г. в Дзагаванке состоялся известный церковный собор. Решения собора были направлены на восстановление чистоты церковного уклада, урегулирование взаимоотношений церковников и прихожан, повышение роли и авторитета армянской церкви. В XIV – XVIII вв. монастырь сформировался как своеобразная школа письма и монументального искусства, где действовали выдающиеся средневековые деятели. В эпитафической надписи 1293 г. на южной стене той же церкви католикос Григор VII Анаварзети приносит в дар монастырю село Дзаг. В своей титулатуре армянский католикос впервые в отмеченной надписи использует термин “Католикос всех армян”. Надпись правово-экономического характера 1325 г. сопоставлена с другими свидетельствами того же содержания. Выясняется, что отчуждение прибавочной стоимости, полученной в результате барщины, являвшейся основой феодального хозяйства, в развитом средневековье имело различные проявления. В X – XI вв. право на подобное отчуждение сохранилось лишь за высшей знатью.

THE COMPLEX OF DZAGAVANK AND ITS EPIGRAPHICAL INSCRIPTIONS

RUBEN GASPARYAN

S u m m a r y

Dzagavank monastery is one of the famous cultural and research-educational centres. Congregation's name is coming from the nearest Dzag settlement. The oldest church is a 7th century architectural building, with the remains of the martyr David Dvnetzi. This small church is cruciform inside, from its east side it has been polyhedral construction. Portal is at the east side, where the 12-lined incomplete inscription has been preserved. The 8th century chapel is built at the north – east side of the church. In the exterior it is square and in its inside part it has a small quadrangular hall with a small altar. Here the Getargel Saint Nshan has been preserved, due to what the monastery has got its new name. In 1270 the wellknown council took place at Dzagavank. That council was dedicated to many religious problems and especially to the question of Armenian church role and authority raising. In the 14th–18th centuries the Dzagavank monastery was well known as monumental art and manuscript centre. One legal-economical epigraphical inscription of 1325 is compared with the documents of the same content. It has been found out, that the seizure of the surplus value coming from corvee during the developed Middle ages has had different demonstrations. This kind of seizure has been the high level nobility's prerogative. Another inscription of 1293 on the southern wall of the same church tells that Catholicos Grigor VII Anavarzetsi has presented Dzag village to the monastery. For the first time in this inscription the Armenian Catholicos in his title list has used “Catholicos of All Armenians”.